

Սևանի համայնքային հիմնահարցերի ուսումնասիրության արդյունքների ամփոփում

Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր

Երևան 2003



**Սևան համայնքում
համայնքային հիմնահարցերի ուսումնասիրության հարցման
արդյունքների ամփոփում**

Հայաստանի բյուջետային վերլուծությունների ծրագիր
Երևան 2003

Հարցման կառուցվածքը

1. Սևան համայնքի 2002 թվականին ընդհանուր իրավիճակի գնահատականը	4
2. Միջոցառումների դասակարգումն ըստ կարևորության	4
3. Համայնքապետարանի աշխատանքի գնահատականը	5
4. Համայնքապետարանի որոշ քայլերի անհրաժեշտության գնահատականը	6
5. Ինչ կցանկանայիք, որ ունենար Սևան համայնքը, որ առայժմ չունի	7
6. Ձեր առաջարկությունը համայնքի ղեկավարին	7
7. Ձեր առաջարկությունը համայնքի ավագանուն	8
8. Հարցվածների առաջարկությունը համայնքի բնակիչներին	8

**Սևան համայնքում
համայնքային հիմնահարցերի ուսումնասիրության հարցման
արդյունքների ամփոփում**

2003 թվականի ապրիլի ընթացքում ՏՀՀ կենտրոնի կողմից իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում անցկացվեց համայնքի հիմնահարցերի ուսումնասիրություն: Սոցիոլոգների կողմից նախօրոք մշակված հարցաթերթը լրացրեցին համայնքի թվով 88 բնակիչներ:

Սույն վերլուծությունն ուղղված է համայնքին հուզող խնդիրների բացահայտմանը, համայնքապետարանի կողմից որոշ միջոցառումների անցկացման անհրաժեշտությանը, ինչպես նաև համայնքապետարանի աշխատանքների և կատարած քայլերի գնահատմանը:

Հարցմանը մասնակցած բնակչության սեռատարիքային կազմին և կրթությանը վերաբերող տեղեկատվությունը ներկայացվում է ստորև բերվող աղյուսակներում:

Հարցվածների սեռը

Արական	60 %
Իգական	40 %

Հարցվածների տարիքը

18- 35 տարեկան	32 %
35- 55 տարեկան	42 %
55- 75 տարեկան	26 %

Հարցվածների կրթությունը

Բարձրագույն	41 %
Միջնակարգ մասնագիտական	14 %
Միջնակարգ	31 %
Հիմնական	15 %

Հարցման արդյունքներից կարող են համապատասխան հետևություններ անել.

- համայնքի ավագանին՝ համայնքի բյուջեի պլանավորման և քաղաքապետի գործունեության վերահսկման գծով.
- համայնքի ղեկավարը՝ համայնքի վիճակի բարելավմանն ուղղվող միջոցառումների և բյուջեի նախագծի կազմման հարցերում.
- հասարակական կազմակերպությունները՝ ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի վերապատրաստման և խորհրդատվության հարցերում.
- պետական կառավարման համապատասխան մարմինները՝ համայնքապետին տրվող պարտադիր և պատվիրակված լիազորությունների վերահսկման գծով:

Հարցաթերթերի ամփոփումից և արդյունքների վերլուծությունից հետո ստացվեց հետևյալ պատկերը: Ներկայացվող վերլուծությունը կատարված է հարցաթերթի կառուցվածքին համապատասխան:

1. Սևան համայնքի 2002 թվականին ընդհանուր իրավիճակի գնահատականը

Գնահատական	Պատասխան
Մասամբ առաջընթաց է ունեցել	61%
Մնացել է անփոփոխ	19%
Որոշ չափով վատթարացել է	19%
Մեծապես վատթարացել է	1%

Համայնքի բնակիչների մեծամասնությունը համայնքի սոցիալ- տնտեսական առաջընթաց է նկատում, որը վկայում է հանրապետությունում նկատելի տնտեսական աճի Սևան համայնքում արտացոլման մասին: Թերևս, վերոհիշյալ հարցին Գեղարքունիքի մարզում միայն Սևանի բնակիչները նմանօրինակ պատասխան կտան, քանի որ, թեկուզ սեզոնային, այդուհանդերձ ամռան և աշնան ամիսներին տուրիզմի և գյուղատնտեսության ակտիվացում է նկատվում:

Միաժամանակ մտահոգիչ է բնակչության այն հատվածի վիճակը, որոնք վիճակի լճացում կամ վատթարացում են տեսնում: Եվ, եթե հաշվի առնվի այն փաստը, որ հարցվածների մոտ 40%-ը նմանօրինակ վիճակում է, ապա այն պետք է մտահոգության առիթ դառնա համապատասխան պետական և համայնքային կառավարման մարմինների համար:

2. Միջոցառումների դասակարգումն ըստ կարևորության

Հարցաշարի մի հատվածը վեր էր հանում համայնքապետարանի կողմից իրականացվող հնարավոր միջոցառումների կարևորությունը:

Միջոցառում	Կարևորություն*		
	1	2	3
Համայնքի ճանապարհների վերանորոգում	61%	18%	5%
Համայնքի բարեկարգում	7%	31%	12%
Աղբահանություն	7%	29%	16%
Մանկապարտեզների վիճակի բարելավում	6%	9%	16%
Սշակության հիմնարկների զարգացում	6%	1%	26%
Կապիտալ շինարարություն (օր.՝ բնակարանային)	1%	0%	8%

*- Դասակարգումն արված է մեկից յոթ գնահատականների միջոցով: Այստեղ ներկայացված են միայն առավել կարևորության գնահատական (1-3) ստացած միջոցառումները:

Ամենաեական միջոցառումը, որին համայնքի անդամները սպասում են համայնքապետարանից, ճանապարհների վերանորոգումն է: Հարցվածների մեծամասնությունն այդ միջոցառումը գնահատել է ամենակարևորը, մնացածները նույնպես մեծ նախապատվություն են տվել դրան:

Միանման կարևորություն ունեն համայնքի բարեկարգումն ու աղբահանությունը: Հարցվողների գնահատմամբ, ճանապարհների վերանորոգումից հետո կարևորությամբ երկրորդը բարկարգումն ու աղբահանությունն են:

Բացի վերը նշված էական միջոցառումներից, հարցվողները կարևորել են նաև մանկապարտեզների և մշակութային հիմնարկների բարելավումն ու զարգացումը:

Անցումային տնտեսությանը բնորոշ կարճաժամկետությունն իր արտահայտությունն է գտել նաև հարցման արդյունքների մեջ: Այսպես, հարցվողների միայն ինը տոկոսն է ամենամեծ կարևորությունը տվել կապիտալ ծախսերի կատարմանը: Ներկա պայմաններում, եթե առկա ռեսուրսների մի մասը չներդրվի կապիտալ ծախսերի մեջ, անխուսափելի կլինի արտադրական, կրթական և մշակութային ենթակառուցվածքների փլուզումը: Հետևաբար, անկախ համայնքի անդամների վերաբերմունքից, համայնքի բյուջեի պլանավորման ժամանակ ծախսերի 20-30%-ը պետք է ծրագրավորվի կապիտալ հատվածում:

3. Համայնքապետարանի աշխատանքի գնահատականը

Հարցաթերթի մեջ անդրադարձ է կատարվել նաև համայնքապետարանի կողմից կարգավորվող որոշ կարևոր ոլորտներում կատարված աշխատանքների գնահատականին:

	դրական	բացասական	դժվարանում են պատահանել
Կրթական ոլորտ	0	100 %	0
Մշակութային ոլորտ	51 %	26 %	23 %
Բնակարանային-կոմունալ տնտեսություն	9 %	44 %	47 %
Ճանապարհային տնտեսություն	55 %	13 %	32 %
Հարկերի և տուրքերի հավաքում	100 %	0	0

Հարկ է համարվում նշել, որ «Փրկեցեք երեխաներին» կազմակերպության կողմից Սևանի քաղաքային մշակույթի պալատի վերանորոգումն էականորեն փոխել է սևանցիների գնահատականը քաղաքապետարանի կողմից մշակութային ոլորտում կատարած միջոցառումների նկատմամբ:

Մարզում բացառիկ է նաև սևանցիների վերաբերմունքը ճանապարհային տնտեսությանը: Բնակչության կեսից ավելին դրական է գնահատել քաղաքապետարանի ջանքերն այս ոլորտում:

Մանկապարտեզների և բնակարանային-կոմունալ տնտեսության կարգավորման նկատմամբ բացասական վերաբերմունքը կարող է բնորոշել համայնքապետարանի աշխատանքների առաջիկա պլանավորման ուղղությունները: Բացթողումներն այս ոլորտներում հիմնականում պայմանավորված են միջոցների սղությամբ, որն էլ բացատրվում է տեղական բյուջեի միջոցների հավաքագրման ցածր մակարդակով: Պատահական չէ, որ հարցվածները դրական են գնահատել քաղաքապետարանի աշխատանքները:

տանքն այս ոլորտում: Հարկերի հավաքագրման ցածր մակարդակը բնակչության կողմից գնահատվել է դրական, մասնավոր և կարճաժամկետ շահերի գերակայության պատճառով:

4. Համայնքապետարանի որոշ քայլերի անհրաժեշտության գնահատականը

Համայնքի հարցված բնակիչները հետևյալ կերպ են գնահատել համայնքապետարանի որոշ քայլերի անհրաժեշտությունը.

Քայլ	Անհրաժեշտություն	
	Անհրաժեշտ է	Անհրաժեշտ չէ
Համայնքապետարանի և ենթակա հիմնարկների աշխատակազմի կրճատում	85 %	15 %
Բյուջեի ծախսերի կողմնորոշում դեպի կապիտալ շինարարության ոլորտ	80 %	20 %
Բյուջեի մեջ աշխատավարձի բաժնի կրճատում	66 %	34 %
Բյուջեի եկամուտների հավաքագրման աճ	25%	75 %
Բյուջեի ծախսերի վերահսկելիության և թափանցիկության աճ	30 %	70 %
Համայնքի ղեկավարման աշխատանքներում համայնքի անդամների մասնակցության աճ	68 %	32 %

Համայնքապետարանի և դրա ենթակայության հիմնարկների աշխատակազմի կրճատման անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի միջոցների օգտագործման նպատակայնությամբ: Նորընտիր համայնքապետերը սովորաբար կազմավորում են իրենց ենթակա աշխատակազմերն ընտրությունների ժամանակ հատկապես աչքի ընկած մտերիմներով, ինչի հետևանքով աճում է համայնքի ստեղծած աշխատատեղերի քանակը, սակայն նվազում է աշխատակիցների մասնագիտական որակը, իսկ հարկատուները միջոցների նմանօրինակ ծախսն արդարացիորեն համարում են անարդյունավետ և ոչ նպատակային: Այս հանգամանքը պետք է գրավի հատկապես ավագանու ուշադրությունը՝ կանխելու համար բյուջետային միջոցների ծախսման անարդյունավետությունը:

Հարցման այս հատվածում համայնքի հարցված բնակչության մեծամասնությունը գտնում է, որ համայնքի բյուջեի ծախսերը պետք է կողմնորոշվեն առավելապես դեպի կապիտալ ոլորտ (ի տարբերություն կարճաժամկետ ընթացիկ ծախսերի), քանի որ համայնքին սպառնում է կրթական, մշակութային և արտադրական ենթակառուցվածքի քայքայում:

Բնակչությունը մեծ է գնահատում նաև համայնքի կառավարման գործընթացում համայնքի անդամների մասնակցության հարցը: Ցավոք, ներկայումս այն բավական ցածր մակարդակի վրա է, սակայն, մարզի մնացած համայնքների համեմատությամբ, որոշ դրական տեղաշարժ Սևանում նկատելի է:

5. Ինչ կցանկանայիք, որ ունենար Սևան համայնքը, որ առայժմ չունի

Հարցման այս հատվածը հուշում է համայնքապետարանի հետագա անելիքների հերթականությունը:

Ցանկալի օբյեկտ	Մասնակիցների տեսակարար կշիռ
Մանկական զբոսայգի	40 %
Եկեղեցի	27 %
Պուրակ, ծառուղի	19 %
Սպորտային հրապարակ	14 %

Ուրախալի է այն փաստը, որ ցանկալի օբյեկտները կարելի է ամփոփել «Մշակույթ, սպորտ, կրոն» հոդվածի տակ: Կարևորությամբ առաջինը մանկական զբոսայգին է:

Եական կարևորություն ունի նաև եկեղեցու շինարարությունը: Այն հնարավորություն կտա պայքարել ակտիվորեն տարածվող աղանդների դեմ: Ցավալի է, որ տասնյակ հազարավոր բնակիչներ ունեցող քաղաքն առայժմ եկեղեցի չունի: Շինարարության համար համայնքի բյուջեն, բնականաբար, չի բավարարի: Հետևաբար, համայնքապետարանը պետք է փորձի կենտրոնացնել հնարավոր հանգանակությունները և լուծել կենսական կարևորություն ունեցող այս հարցը:


6. Ձեր առաջարկությունը համայնքի ղեկավարին

Հարցաթերթի մեջ ազատ հատված կար, որտեղ համայնքի հարցված անդամները կարող էին որևէ առաջարկություն անել համայնքի ղեկավարին: Առաջարկները խմբավորելուց հետո ստացվել է հետևյալ պատկերը.

Առաջարկություն	Մասնակիցների տեսակարար կշիռ
Պարի խմբի ֆինանսավորում	9 %
Մշակութային օջախների աճ	9 %
Աշխատատեղերի բացում	39%
Կաշառակերության վերացում	11 %
Կրթական համակարգի բարելավում	17 %
Աջակցում փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացմանը	2 %
Քաղաքի բարելավում	1 %
Օգնություն անապահով խավերին	11 %

Համայնքում առկա գործազրկությունն արտացոլում է գտել պատասխանների մեջ: Հարցվածների գրեթե 40%-ը համայնքապետին առաջարկում են պայմաններ ստեղծել նոր աշխատատեղեր բացելու համար՝ համարելով դա ներկա պայմանների և բարդությունների լավագույն լուծումը:

Եական ոլորտներ են նաև կրթական համակարգի բարելավումը, կաշառակերության վերացումը և անապահով խավերին սոցիալական օգնությունը:



7. Ձեր առաջարկությունը համայնքի ավագանուն

Ավագանուց համայնքի բնակիչները պահանջում են այն, ինչը մտնում է նրանց օրինական պարտականությունների մեջ: Պարտականությունների ընկալման և կատարման առաջարկությունը ենթադրել է տալիս, որ Սևան համայնքի ավագանին համալրված չէ տեղական ինքնակառավարման ոլորտի որակյալ մասնագետներով:

Առաջարկություն	Մասնակիցների տեսակարար կշիռ
Պարտականությունների ընկալում և կատարում	85 %
Աշխատանքի թափանցիկություն	6 %
Համայնքապետի աշխատանքի վերահսկողություն	9 %

Ավագանու հետ կապված խնդիրները լուծելու համար կարևորվում է հասարակական կազմակերպությունների դերը, հատկապես, սեմինարների կազմակերպման, ոլորտի օրենսդրական դաշտի և բյուջետային գործընթացի մանրամասների ներկայացման առումով:

8. Հարցվածների առաջարկությունը համայնքի բնակիչներին

Ստեղծված իրավիճակում համայնքի բնակիչների համբերատարության ձգտումն անհաժեշտ է համադրել իրավիճակը շտկելու ակտիվ քայլերի հետ:

Առաջարկություն	Մասնակիցների տեսակարար կշիռ
Համբերություն	80 %
Լավատեսություն	6 %
Բարիություն	7 %
Գյուղատնտեսական աշխատանքների կատարում	8 %

Վերջիվերջո, եթե սպառված են աշխատատեղեր ստեղծելու համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսները, առաջարկվում է զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, այլ ոչ թե անգործ մնալ կամ արտագաղթել:

Լիաժողովս եւք, որ Սևան համայնքի ղեկավարությունը և ավագանին բավարար ուշադրություն կդարձնեն անցկացված հարցման արդյունքներին՝ բարձրացնելով աշխատանքի թափանցիկությունը, որոշումների ընդունմանը համայնքի անդամների մասնակցությունը՝ կենտրոնացնելով տնօրինվող ռեսուրսները համայնքի բնակչությանը հուզող հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ: